ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<ՆԱՐԵԿԱՑԻ-ՄԵԾԱՐԵՆՑ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ>>

ԿԱՏԱՐՈՂ՝ ԼՈՒՍԻՆԵ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ Լ.ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.155 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ / ՊՈԱԿ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ /ՊՈԱԿ

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ ԱՆԱՀԻՏ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Հետազոտության խնդիրները - Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները՝

1/ուսումնասիրել Մ.Մեծարենցի պոեզիան, դրա վերաբերյալ եղած քիչ թե շատ ուսում նասիրությունները

2/վերհանել բանաստեղծություններում Մ.Մեծարենցի բարձրացրած հարցերը, խնդիր-ները

3/Նարեկացու՝ մինչմեծարենցյան մեկնաբանությունները

4/Մեծարենցը՝ նարեկացու մեկնաբան

Հետազոտության մեթոդները –Աշխատանքը կատարելու համար մեթոդաբանական հիմք են դարձել Մ.Մեծարենցի հեդվածների վերլուծությունը, առանձին բանաստեղծու-թյունների համեմատությունը Նարեկացու ստեղծագործությունների հետ:Կիրառվել են վերլուծական, համադրական, համեմատական մեթոդները:

Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունը-Աշխատանքում սկզբնաղբ յուրներով հանդերձ՝ներկայացված են Մ.Մեծարենցի՝ Նարեկացուն վերաբերող հատ-վածներ, անանձնական գաղափարը ներկայացնող բանաստեղծությունները:Վեր է հան վել բանաստեղծություններում և հոդվածներում՝ այսօր էլ արդիական հարցեր՝

1/<<գրական ազգակցություն>> մեթոդին միջին դպրոցում ծանոթանալը ունի մի քանի նպատակ

2/ծանոթանալ գրական երկի ուսումնասիրությանը ընդհանրապես, գրականությանը Մասնավորապես

3/համեմատել և համադրել բանաստեղծությունները՝ ձևավորելով քննադատական կարողունակությունը աշակերտների մոտ

4/ձևավորել վերլուծական-համադրական կարողունակություն

5/համադրման արդյունքում ձևավորել բազմաճյուղ աշխարհայացք

Աշխատանքի արդիականությունը –Աշխատանքում կփորձենք ներկայացնել որպես մի յուրօրինակ <<խղճի խորան>>,որ գալիս է կանգնելու Աստծո առաջիրեն մարդկության պատգամավոր համարող Նարեկացու կողքին՝ որպես Նարեկացու պատգամավոր, հա-մայն մարդկության առաջ:Աշխատանքում կփորձենք ներկայացնել Նարեկացու և Մե-ծարենցի անանձնական՝ բարձրագույն վիճակին հասնելու ճանապարհը:

Անանձնական երջանկության պարզաբանումը և դեպի այն գնալու ճանապարհի փնտրտուքը կպայմանավորեն աշխատանքի արդիականությունը:

Հետազոտության նպատակը –հետազոտության նպատակն է համեմատել Նարեկացու և Մեծարենցի ստեղծագործությունների գրական ազգակցությունը տարաբնույթ ժամանակների և իրադարձությունների զարգացումների համատեքստում:Անանձնական սիրո դրսևորման ձևերին, մասնավորապես բնապաշտական պոեզիայի ավանդույթների պահպանմանն ու փոխանցմանը:

ՆԱՐԵԿԱՑԻ-ՄԵԾԱՐԵՆՑ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդի գրականագիտության ուսումնասիրության կարևորագույն առարկաներից է նաև գրոցների միջև առկա գրական կապերի, գրական ցեղակցության լուսաբանման խնդիրը, որը ուսումնասիրողին մղում է դեպի նոր որոնումների, գրականության պատմությանն ուղղված վերլուծական ժամանակակից հայացքների ճանապարհը:

Որն է գրական այդ կապի ակունքը, որտեղ պետք է փնտրել գրական միևնույն դպրոցների, խաչմերուկների գոյացման սկզբնաղբյուրը...

Գիտական ճշգրիտ և ներդաշնակ վերլուծության համար,մեր համոզմամբ, նախ պետք է ուսումնասիրել,ճշգրտել տվյալ գրողի դերը գրականության պատմության մեջ, հասկանալ՝ ինչ նորություն է բերել համապատասխան հեղինակը,ինչ է վերցրել նախորդներից, և որ ամենակարևորն է՝ որն է նրա թողած հետագիծը գրական մայրուղում, գրական հետագա ինչ ձեռքբերումների նախասկիզբ է եղել:Ահա այդ հարցերի պատասխանները որոնելիս մեր աչքի առջև հառնում է Նարեկացի-մեծարենց կապը,որը հենց առաջին հայացքից էլ պարզ է դառնում, որ նախ մարդկային, բանաստեղծական միևնույն մտածողության,հումանիզմի,աստվածատուր հանճարեղության փայլուն դրսևորումն է մեզանում:

Մենք բնավ էլ հակված ճենք այն մտքին, որ նարեկյան դպրոցը <<անաշակերտ>> էր մնացել մինչև Մեծարենցը, ավելին՝ վստահ ենք, որ շուրջ հազար տարվա ընթացքում Այդ դպրոցի դասերը հարստացել են տասնյակ տաղանդավոր բանաստեղծներով, և վերջիններով էլ միջնորդավորված՝ հասել Մեծարենցին՝ նվաճելով գրական անհաս բարձունքներ:Բանաստեղծական այդ մտածողությունը ենթադրում է անանձնական երջանկության, մարդասիրական ձգտումների վերհանում, բնության ներշնչմամբ ստեղծված պոեզիա,անհատ բանաստեղծի և համայն մարդկության որոշակի նույնականացում, անգամ ուղիղ խոսք՝ հասցեագրված Երկնային տիրոջը,սիմվոլիստական-խորհրդանշային ինչ-ինչ պատկերներ, որոնք,ի դեպ, իրավունք չեն վերապահում որևէ ուսումնասիրողի նրանց անվանելու սիմվոլիստ բանաստեղծներ, առձայնույթ և բաղաձայնույթ,բանաստեղծական հանգավոր տողեր և այլն, սրանցից բացի՝ նաև Մեծարենցի հեղինակած գրականագիտական,գրքննադատական հոդվածներում արտահայտված բացառիկ կապվածություն և

ներշնչանք՝ դեպի Նարեկացին, ով Մեծարենցի համար ներշնչման մեծագույն ակունք լինելուց զատ՝ նաև գեղագիտական ճշմարիտ ուսուցիչ էր:

Հատկանշական է, որ Մեծարենցին նախորդած շատ հեղինակներ,արդարացիորեն ընդվզել են այն կարծիքի դեմ, որի համաձայն Նարեկացին սովորական կրոնավոր է , և վերջ: Իհարկե, դժվար է չհամաձայնել այն մտքին, որ Նարեկացին գրել է աղոթագիրք, սակայն ակներև է , որ այդ աղոթագիրքը լի է կենսունակությամբ, բանաստեղծական մտածողությամբ, թարմ և գրավիչ պատկերներով առլեցուն այդ մատյանը լիովին արժանի է <<գրական երկ>> կոչմանը,ավելին՝ Լ.Շանթը, հինվելով <<Մատյանի>> որոշ հատվածների վրա, իրավացիորեն հանդես է եկել համարձակ հրապարակմամբ, որտեղ ապացուցում է, որ <<Նարեկը>>,մեղմ ասած, աղոթք չէ՝ գոնե հայ առաքելական եկեղեցու դասական աղոթքի Չափանիշներով՝ այդ մասին գրելով՝.<<Եվ վերջապես սա ինչ աղոթք է, երբ կդիմես քո սիրած ու պաշտած Աստծուդ ու կըսես.<<Ամեն աղուոր ու բարձր դիրքերն ու պատիւները պահեր ես քեզի համար և ամենեն գեշ ու ծանր բաները պարտադրեր ես ու տուեր ես ինծի բոլոր բազմարժան իրաւունքները պահեր ես քեզի և տուեր ես ինծի վարանելի պատասխանատվութիւները>>:Սա արդէն աղօթք ու փառաբանութիւն չէ,սա արդէն կռիւ է, պահանջ մարդկային իրավունքի>>/1/:Նկատենք, որ այս մտքի վրա ծառացել է նաև Գր. Նարեկացու լավագույն մեկնիչներից մեկը՝ Արշակ Չոպանյանը,ով, ըստ արժանվույն գնահատելով տասներորդ դարի գրական հսկային և տալով վերջինիս արժանի գիտական շատ բարձր գնահատական, մասնավորապես գրում է.<<Հանենք զանիկա աղոթք գրողի կրոնական գույնեն, ուր սահմանափակված էր , և դնենք իր տեղը, գրական մեծ հանճարներուն օդակարկառ բարձունքին մեջ,ալ չըսենք, որ մեր բանաստեղծությունը հսկա չունի: Հոմերոսին ու <<Աստվածաշունչ>>-ին հետ, մեր տղոց ձեռքը տանք զայն և սորվեցնենք Անոնց սքանչանալ այդ մեծության վրա>> / 2/:Եթե ուշադիր հետևենք մեր հայտնի վերԼուծաբանների տեսակետներին, կտեսնենք, որ գրեթե բոլորն էլ շատ բարձր են գնահատել նարեկացու ստեղծած պատկերային և տաղաչափական համակարգերը, նրանց խորին համոզմամբ ՝Նարեկացին հայ պոեզիայի բարձունքն է, գրական նորարար, որից կարելի է անդանար սովորել:Բայց մեծարենցի պարագայում նկատել են Նարեկացու հետ

/1/Շանթ Լ.,Երկեր, հ.9,Բեյրութ, 1946թ., էջ 117

/2/Չոպանյան Ա.,Երկեր, Երևան, 1988թ., էջ 321

ունեցած գրական շատ ավելի խորը կապեր և առնչություններ, որոնք դրսևորվել են ոչ միայն գրաքննադատական հոդվածներում և ուսումնասիրություններում, այլև Մեծարենց բանաստեղծի կերտած գեղարվեստական պատկերներում, առձայնույթում և բաղաձայնույթում,որոնք ապացուցում են, որ Մեծարենցը լավագույնս սերտել է Նարեկացու դասերը,ավելի դիպուկ ասած՝ Մեծարենցը, նարեկացու լավագույն մեկնչներից մեկը լինելուց զատ,նաև արժանի հաջորդն է հայկական պոեզիայում ունեցած իր դերով և նշանակությամբ:Համեմատության համար ասենք միայն , որ,օրինակ, Պ.Սևակը, գրելով Նարեկացու մասին գրականագիտական արժեքավոր հոդված,արդի հայերենի վերածելով նրա ստեղծագործությունները, խորապես հասկանալով և շատ բարձր գնահատելով Նարեկացու դերը ազգային գրականության մեջ,այնուամենայնիվ, իր պոեզիայում Նարեկացու հետ չունի գրական այնպիսի առնչություններ, որպիսիք առկա են Մեծարենցի մոտ: Այո, Պ. Սևակը,ով Նարեկացու մասին մասնավորապես գրել է ,որ.<<Միայն իր մի քանի տաղով Նարեկացին կդառնար մեր առաջին մեծ բանաստեղծը:Բայց նա կերտեց նաև իր<<Մատյանը>>,որ մեր բանաստեղծության Ախթամարա վանքն է՝ լոկ այն զանազանությամբ, որ <<Մատյանն>> անկործանելի է ստուգապես>> /3/,այնուամենայնիվ իր պոեզիայում չդրսևորեց Նարեկացին ուղղված գրական այնպիսի հարազատություն, որով կարողանար կանգնել Մեծարենցի, Սիամանթոյի կողքին:Նշված փաստն էլ գալիս է ապացուցելու, որ միամտություն կլիներ ասել, թե<<Նարեկացին և Մեծարենցը>> թեմայի ուսումնասիրման համար բավարար է միայնՄեծարենցի հեղինակած <<Նարեկացիին հետ>> հոդվածը, ուստի այս հեղինակների կապը ստորև կքննարկենք ինչպես հիշյալ և այլ հոդվածների, այնպես էլ հեղինակների կերտած ստեղծագործությունների լայնարձակ տիրույթում:
/3/Սևակ Պ.,Երկեր, հ.3, Երևան, 1983թ., էջ 64

ՄԵԾԱՐԵՆՑԸ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԵԿՆԱԲԱՆ

1908 թվականի հունվարի 19-ին <<Լույս>>-ում տպագրված <<Նարեկացիին հետ>> հոդվածը Մեծարենցն սկսում է խորհրդավոր պատկերներով /խուցիս ճերմակ վարագույրները կը սարսռան կամ նախնականության բաղձանք մը՝ երկյուղով մակարդված,առհավության հեռավլուր ձայն մը կարծես հովին արհավրոտ ձայնին ընդխառնված՝ հետո անկե տարանջատ՝կը կոթողվի մեկեն հոգիիս մեջ /, որոնք ընթերցողին կարծես նախապատրաստում են մի մեծ, աստվածային առեղծվածի մեկնաբանմանը:Այդ աստվածային առեղծվածը Գր.Նարեկացին է՝ հայ գեղարվեստական մտքի անձնագիրն աշխարհի առաջ: Մեծարենցին<<Մատյան ողբերգության >> պոեմում ըստ երևույթին գրավել էին մեծ հումանիզմն ու անկաշկանդ մտքերի առատ հոսքը, աստվածային կատարելությանը ձգտելու, մարդուն երկու ոտքի վրա շտկված մեջքով տեսնելու Նարեկացու տենչը, որն այնքան հարազատ էր Մեծարենցին:Սրանից բացի՝կար նաև մեկ այլ կարևոր հանգամանք.դեղերի տարբեր բուժումների օգնությամբ ապաքինվել չկարողացողՄեծարենցը հույսն ամբողջովին կապում էր<<Նարեկի>> հետ, որը հիվանդ հոգիների համար մի իսկական փարոս էր: Մեծարենցի առաջին կենսագիրներից Թորոս Ազատյանը գրում է, որ ժամանակակիցների Վկայությամբ՝մեծարենցը իր մոտ միշտ ունեցել է Նարեկացու <<Մատյանը>>, իր բարձի վրայից չի բացակայել բանաստեղծական պոռթկումը:Տեղին է հիշել Պ. Սևակի՝թեկուզ միայն այս օրինակով իր ճշմարտացիության մեջ ապացուցված այն պնդումը, որ <<Լինելով մեր հին գրականության ամենից շատ հրատարակված և հայ ժողովրդի մեջ ամենատարածված գիրքը,իր բազմաթիվ վերնագիր-անվանումների փոխարեն կոչվելով պարզապես <<Նարեկ>>՝ բանաստեղծության այս արտակարգ և անզուգաբախտ հատորը ոչ այնքան ընթերցվել է, որքան համբուրվել, դրվել ոչ այնքան դարակի կամ գրակալի,որքան հիվանդի ճակատիվրա կամ բարձի տակ...հայ ժողովուրդը իր այս մեծին անմահացրել է նույնքան արտակարգորեն, որքան արտակարգ էր նույն ինքն այդ մեծը.դարեր շարունակ նրա գիրքը համարվել է ՀՐԱՇԱԼԻՔ, և դարերն ապացուցեցին, որ իսկապես էլ հրաշալիք է դա>>/4/:

Մեծարենցին հաջողվում է ներթափանցել<<Նարեկի>> էության մեջ, նվաճել նարեկյան՝մարդկանց համար դժվարընկալելի անկյուններ, տեսնել այն լույսը,ճառագայթը,որ

/4/Սևակ Պ.,նույն տեղը, էջ 64

<<կը սահի հոգիին խորը՝քայքայված երազներու տրցակը ժապավինելու>>,այդ Մեծարենցն էր,որ ըստ արժանվույն գնահատեց Նարեկացու կերտած պատկերների <<Նկարչական ճշգրտությունը>>, ավելին՝փաստեց նաև Նարեկացու՝ գրականագիտության մեջ շատերին այնքան անհաս ձևի և բովանդակության միասնության, ներդաշնակության գոյությունը:

<<Մատյանը>. Համեմատելով ալեկոծության հետ՝ Մեծարենցը հայտնաբերում է նաև ուրույն պատկերներ, կերպարներ, որոնց գոյությունը առանձնակի հմայք էտալիս պոեմին:Խոսքը նախևառաջ տառապող անհատի մասին է, որին Մեծարենցը համեմատում է փոթորկոտ ծովում տարուբերվող նավակի հետ,նկատում է խեղդվողի ակնհայտ նմանությունը,տառապող անհատի լուսաբաղձ հոգին,ձգտումը դեպի արևը,կատարյալն ու մնայունը, այսինքն՝ բանաստեղծը կարողանում է տեսնել և գնահատել <<Նարեկի>> բանաստեղծական արժանիքները, նրա մեջ ամփոփված մարդկային ձգտումները, այլ կերպ հնարավոր չէր կատարել ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական ճշմարիտ վերլուծու թյուն:Եթե որոշ ուսումնասիրողների համար <<Մատյանը>> սովորական աղոթագիրք է, առավել ուշիմ ուսումնասիրողների համար՝ բանաստեղծական բարձրագույն նվաճում, ապա Մեծարենցի համար այն նախևառաջ հույզերի մեծագույն պոռթկման, մարդ-Աստված երկխոսության վառ օրինակ է, որն այնքան պետք էր երիտասարդ հանճարին, ով արդեն բռնել էր մահվան ճափան:Այն ալեկոծությունը, որ տեսնում էր Մեծարենցը <<Մատյանի>> էջերում, ապացույցն է իր հոգեկան տվայտանքներիմ ներքին ալեբախումների,դա կյանքի, ապրելու համար պարտադրված ներքին գոյամարտի վկայությունն է: Վերևում արդեն ասացինք, որ որոշ ուսումնասիրողներ նկատել են Նարեկացու՝ առ Աստված ուղղված բանավեճանման տողերը, որոնք ասված են համամարդկային հումանիզմի դիրքերից:Անշուշտ, նման մտքեր համակել են նաևՄեծարենցին,ուստի թերևս դա էր <<Նարեկում>> առկա <<ալեկոծության>>, <<մրրիկի>> այդքան տեսանելի լինելը նրա դիրքերից:

Մեկ նախադասությամբ ասած՝Մեծարենցը, կարծես մի յուրօրինակ <<Խղճի խորան>> դարձած, գալիս է կանգնելու Աստծո առաջ իրեն մարդկության պատգամավոր համարող Նարեկացու կողքին՝ որպես Նարեկացու պատգամավորը համայն մարդկության առաջ: Երբ վերլուծական հայացք ենք նետում դեպի հայ գրականություն,հայկական պոեզիա,

անպայման նկատում ենք հայ պոեզիայի հասկայի,գրական մեծ նորարարի,տասներորդ դարի հանճարի հայ գրականության սնուցման մեծագույն ակունքի՝Գրիգոր Նարեկացու՝ այդ գրականության վրա ունեցած տիրական ազդեցությունն ու դեպի Նարեկացին ուղղված գրական ցեղակցությունը:Ասվածի պերճախոս ապացույցն է հայ դասական պոեզիայի հանճարահանդեսը.Նարեկացուց ներշնչված,նրա գրական դպրոցն անցած,Նարեկացուն իրենց մեջ պարունակող դասականները աչքի են ընկնում բանաստեղծական ուրույն մտածողությամբ, խոսքի շքեղությամբ,հանգավոր պոեզիայի,առձայնույթի և բաղաձայնույթի կանոնավոր կիրառմամբ:Այդպիսին են Շնորհալին և Երզնկացին, Թումանյանն ու Իսահակյանը,Չարենցն ու Տերյանը,Վարուժանն ու Սիամանթոն, այդպիսինն էր և Միսաք Մեծարենցը:

Արդեն նշել ենք, որ Նարեկացի-Մեծարենց կապը չի սահմանափակվում միայն վերոնշյալ հոդվածով:Պարզելու համար նարեկացու ունեցած դերը Մեծարենցի քնարերգության մեջ, բավական է ուսումնասիրել միայն նրա բանավիճային հոդվածներից մեկը՝ վերնագրված <<Հետամանց բարեկենդան>>, որտեղ հանճարեղ քնարերգուն, պաշտպանվելով Փայլակի գռեհիկ և հակագիտական քննադատությունից, արդարացիորեն նկատում է, որ իր կիրառած բառարվեստը, որը դաժան քննադատության է ենթարկվել Փայլակի կողմից, ամենևին էլ նոր, առավել ևս խորթ չեն հայ քնարերգությանը.դա նախ նարեկացու լեզվամտածողության արգասիքն էր:<<Դիտելի է, որ Փայլակի `իբրև անճաշակ դասապարտված բառերը՝առավելապես նախնյաց մատենագրության մեջ գործածվածներն են, նույն բառերու առատությունն է, որ ըսել կու տա <<սիրատենչ>> պարոնիկին.-

Իրիկունը՝ էջ 56՝ գլուխ գործոց մը է անճոռնի, անճաշակ խժալուր բառերու>>/5/:

Եվ Մեծարենցը բնավ էլ չի ժխտում, որ ինքը ստեղծագործելիս աչքի առաջ է ունեցել նարեԿացուն, և իր օգտագործած բառերն ու ոճը զուտ հայկական են,ազգային՝ այդ մասին Մասնավորապես գրելով.<<Եթե գիտնար Փայլակ Նարեկացիին այս նմանաձայնությունը, գուցե չծաղրեր իմինս,որ չքնաղ բան մը ըլլալու հավակնությունը չունի, բայց ունի անճաշակ որակումին դեմ բողոքելու արժանապատվությունը>>/6/:Ահա հենց այս մեկնաբանությունը հաշվի առնելով նաև պետք է վերլուծենք Մեծարենցի գեղագիտական պատկերնե-

/5/Մեծարենց Մ.,Երկեր, Երևան, 1986թ., էջ 199

/6/Մեծարենց Մ., նույն տեղը, էջ 200

րի աշխարհը.սրանք արդեն հաստատապես ապացուցելու են գալիս , որ մեծարենցյան առձայնույթը / մասնավորապես հիշյալ հոդվածում նշված Ծ-երի կուտակումները / մի հարազատ ձեռք են պարզում դեպի Նարեկացու բանաստեղծական աշխարհը:Հիշենք Մեծարենցի <<Կայծեր>> բանաստեղծությունը, որի գեղարվեստական լուծումները ակնհայտ հարազատություն ունեն Նարեկացու գրելաոճի հետ.

Հոգվույս դափ ու թմբուկի
Կիջնե ծիծաղն այս գիշեր.
Ծնծղաներու պես ցնծուն՝
Ծափ կը զարնեն իմ հուշեր:

Սրանից բացի կարող ենք բերել նաև բանաստեղծական բազմաթիվ այլ տողեր,որոնք լի են հիշյալ բաղաձայնույթի օրինակներով.<<Լույսի ծըփուն ծողիկին՝ որ կը ծլի փողփողուն ծովեզերքի փարոսեն/<<Ցայգանկար>>/,Լուսացնցուղ ցողով լեցուն/<<Ցայգն է պայծառ>> Ծուխեն ծաղիկ մը ծափելի /<<Խունկ և արցունք>>/,Կապույտ ծոպեր, ծիածան, ծփուն ձայներ, միստիք վարդ/<<Կիրակնամուտք>>/,Մեջն հոտևան ծայրիներու ծայրածավալ ծաղիկներուն/<<Իրիկունս>>/,Ծափ կը զարնե,ծիծաղեն ծլեր է ծիրն իր այտին/<<Բյուրեղի դյութանք>>/,Գիշերն անույշ է,գիշերն հեշտագին/<<Սիրերգ>>/:

Ակամայից հիշում ես Մեծարենցի՝Նարեկացու մասին գրած տողերը.<<Գիտեր ծիծաղախիտ ժպտեցնել բառերը>>:

Իսկ ինչ վերաբերում է մեծարենցյան պատկերային համակարգին,որն ակնհայտ նմանություն ունի նարեկացուհանճարեղ բառակերտվածքի շնորհիվ ստեղծված գեղագիտական պատկերների հետ, պետք է ասել,որ ժամանակին քննադատությունը արդարացիորեն նկատել է,որ.<<Այն ժամանակ, երբ շատերը հիանում էին Վեռլենով՝իբրև թե մի <<Նշանավոր նովատորով>>, մերբանաստեղծների աչքի առջև բարձրանում է իր ամբողջ հասակով Նարեկացու վիթխարի կերպարը:Մեր առաջավոր բանաստեղծները չէին կարող չնկատել, որ այնքան գովաբանված վեռլենների՝ պոեզիայի աշխարհը բերած<< նորությունները>> /հատկապես ոտանավորի երաժշտականությունը/ շատ դարեր առաջ արդեն հայտնագործել էր Գրիգոր Նարեկացին և ոչ միայն հայտնագործել, այլև ստեղծել էր բովանդակությամբ հարուստ և առողջ/ և ոչ նրանց նման հիվանդագին / մի շարք դասական բանա-

/7/Մկրյան Մ.,Երկեր,հ. 2, Երևան,1988թ.,էջ 28

ստեղծական նմուշներ>>/7/՝ դրանով ևս մեկ անգամ ապացուցելով, որ Մեծարենցին օտարամոլության, հայ գրականության մեջ օտարածին պատկերներ բերելու մեջ մեղադրողներն առնվազն տեղյակ չէին Նարեկացու ստեղծագործություններից, և նրանց <<գրաքննադատական հայացքները>> չեն գերազանցում դատարկախոսության շեմը:
Մեծարենցի՝ Նարեկացու հետ ունեցած գրական աղերսների փայլուն ապացույցներից է նաև այն հումանիզմը՝մարդասիրությունը, որը վերստին կամրջում է տասներորդ և քսաներորդ դարերը:Մեծարենցի՝ մարդասիրական ուղղվածություն ունեցող բանաստեղծությունները, անշուշտ, Նարեկացու դասերից մեկն են, չէ որ տասներորդ դարի գրական հսկան ևս փայլում էր մարդասիրությամբ,համայն մարդկության մեղքերն իր մեջ ամփոփող բանաստեղծը,ով իրեն համարում էր աշխարհի պատգամավորը Աստծու առաջ,հումանիզմի այնպիսի օրինակ է ծառայել մարդկությանը, որ տասը դար հետո ևս կենսունակ է գրական մշակների համար:
Խորացնելով մարդասիրական թեմաների արծարծման արտահայտության ձևը՝ չենք սխալվի, եթե ասենք,որ Նարեկացու <<Մատյանում>> կիրառված բանաստեղծական մտածողության արդյունքներից մեծագույնը Աստծո հետ ուղղակի խոսելու,<< ի խորոց սրտի>> խոսքեր ասելու արվեստն է:Քիչ բանաստեղծներ կարող ենք գտնել, որոնք իրենց ստեղծագործությունների միջոցով խոսք բացած լինեն Աստծո հետ, ուղղակի դիմեն Երկնային տիրոջը՝հանդես գալով կոնկրետ ասելիքով...
<<Տուր ինծի Տեր, ուրախություն անանձնական>>,-աղերսում է անձնական բազում խընդիրներ ունեցող Մեծարենցը՝ մարդասիրության բացառիկ օրինակ հանդիսանալով համայն մարդկության համար:Հումանիզմի այսպիսի բացառիկ օրինակների հանդիպում ենք հատկապես <<Իրիկունը>>,<<Հյուղը>> և <<Հովը>> բանաստեղծություններում,սակայն մեծարենցյան հումանիզմի բարձրակետը, մեր կարծիքով, <<Տուր ինծի,Տեր>> ստեղծագործությունն է, որն ունի <<ԱՐԴԻ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՅՐ ՄԵՐԸ>> խորագիրը:Այս բանաստեղծության վերաբերյալՄեծարենցի ստեղծագործությունները լավագույնս արժևորած ակ. Հր.Թամրազյանը զարմանալիորեն գրել է.<<Հասկացողը հասկանում է,որ այդ <<աղոթքը> սոսկ փոխաբերություն է,միայն ձևականորեն կապվում է <<Տերունական աղոթքի>> հետ, ուր խոսվում է հանապազօրյա հացի,պարտքերի ու մեղքերի թողության մասին>>/8/,որը,
/8/Թամրազյան Հր.,Բանաստեղծության հազարամյա խորհուրդը,Երևան,1986թ., էջ 286

մեր խորին համոզմամբ, մեղմ ասած, վիճելի տեսակետ է, քանի որ գեղարվեստական այն-պիսի հզոր մտածողություն ունեցող հանճարեղ Մեծարենցը չէր կարող գրել որևէ երևույ-թին ձևականորեն կապված իրողության մասին:Այս բանաստեղծությունը Տերունական դասական աղոթքի վերանայումն է ժամանակակից մարդու տեսանկյունից,ով լավագույն ձևով հասկացել է ժամանակի ոգին,արդի մարտահրավերներին դիմակայելու եղանակ-ներն ու միջոցները:Ասվածը բնավ էլ չի ենթադրում ժխտողական վերաբերմունք դեպի քրիստոնեական վարդապետությունը / ի դեպ, բանաստեղծությունը նվիրված է Դուրյան սրբազանին /,այլ նախևառաջ բանաստեղծական այնպիսի մտածողություն, որն ի զորու է մեծ աղոթասաց Նարեկացուց հայ գրականություն մտած մարդասիրության անձնազո-հության օրինակ ծառայելու ժամանակակիցների ու հետագա սերունդների համար, իսկ դրա համար թեևս անհրաժեշտ էին նոր մոտեցումներ,արդիական լուծումներ:Ավելի կոնկ-րետ՝ քսաներորդ դարի քաղաքացին, ազատված լինելով կրոնական, եկեղեցական զանա-զան կաշկանդումներից, մի համարձակ հայացքով է գնահատում իր ժամանակակիցների հանապազօրյա խնդիրների լուծման ուղիները:Մի կարևոր հանգամանք ևս, այս բանա-ստեղծությունը գրվել է 1908 թվականի հունվարի 1-ին,այսինքն՝<<Նարեկացիին հետ>> հոդվածից մի քանի օր առաջ,որը վկայում է,որ Մեծարենցն այդ ժամանկ, ավելի քան եր-բևէ,իրոք, տարված է եղել քրիստոնեական գաղափարներով:Հոդվածն ու բանաստեղծու-թյունը ծնվել են նույն ապրումներից և հույզերից, ուստի միանգամայն համաձայն ենք մե-ծարենցագիտության մեջ լրջագույն ավանդ ունեցող ուսումնասիրողի՝Է.Ջրբաշյանի այն պնդմանը,որ<<Ամբողջովին հումանիստական գաղափարներով ողողված իր այս բանաս-տեղծությունը Մեծարենցը վերնագրել է նաև<<Արդի մարդուն Հայր մերը>>,դրանով իսկ ուզելով ակնարկել,որ ժամանակակից մարդու լավագույն ձգտումները պետք է կայանա ոչ թե վերացական կրոնական մղումների և ավանդական աղոթքների,այլ մարդասիրական պայծառ ու անկաշկանդ իդեալներիմեջ>>/9/ :Այո, իսկապես,Երկնային տիրոջը այնպիսի առաջարկ-խնդրանքով դիմելը,ինչպիսին է <<Եվ թող մեզ զպարտիս մեր,որպես և մեք թո-ղումք մերոց պարտապանաց>>-ը քսաներորդ դարում ծնունդ տվեց իր մարդասիրական, մարդկային-բանաստեղծական,առ Աստված ուղղված այնպիսի աղերսանքի, որը շատ

/9/Ջրբաշյան Է.,Միսաք Մեծարենց, Երևան, 1977թ.,էջ 116

ավելի խրախուսելի կարող է լինել իսկական քրիստոնյայի համար,ով ուսանել է աստվածաշնչյան դասերը.

Տուր ինծի, Տեր, ուրախությունն անանձնական,

Ու չըլլա որ ուրիշներու կոծն ու կական

Խեղդել ուզեմ ջրվեժին մեջ դափիս ձայնին:

Եվ մի վերջին հատկանիշ,առանց որի չէր ամբողջանա Նարեկացի-Մեծարենց գրական ցեղակցությանը նվիրված ուսումնասիրությունը.խոսքը վերաբերում է բնապաշտական պոեզիային:Ակնհայտ է, որ Նարեկացու համար բնությունը եղել է նրշնչման մեծագույն աղբյուր,գեղարվեստական պատկերային համակարգի մեծագույն շտեմարան, քանի որ հատկապես տաղերում բնության պատկերներն են այն հենարանը, որոնց վրա Նարեկացին կարողացել է բարձրացնել գրական մնայուն արժեքներ:Ասվածի ամենաակնառու օրինակը<<Վարդավառի տաղն>> է.

Գոհար վարդն վառ առեալ

Ի վեհից վարսիցն արփենից:

Ի վեր ի վերայ վարսից

Ծավալէր ծաղիկ ծովային:

Ի համատարած ծովէն

Պղպջէր գոյնն այն ծաղկին,

Երփին երփնունակ ծաղկին

Ծողծողէր պտուղն ի ճղին:

Սա միթե չէր կարող ներշնչման մեծագույն ակուն լինել Մեծարենցի բնապաշտական պոեզիայի ստեղծման համար...Համենայն դեպս,հատկապես<<Աքասիաներու շուքին տակ>> բանաստեղծությունն իր գեղագիտական կատարելությամբ հիշեցնում է Նարեկացու վերոհիշյալ տաղը.

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կթափե

Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,

Հոգիներուն կիջնե երազ մը բուրյան,

Ինչ հեշտին է մընթնշաղն այս սատափե:

Աքասիաներ,գինով լուսե ու տապե,

Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան.

Մինչ կը ձյունե ծաղիկն իրենց հոտևան՝

Զոր խոլաբար հովը գրկել կը շտապե:

Այստեղ, իհարկե, չենք կարող շրջանցել այն հանգամանքը, որ Նարեկացին միստիկ բա-Նաստեղծ է,այսինքն՝ իր գերագույն նպատակն է հասնել և ձուլվել աստվածային մեծու-թյանը, իսկ Աստված, նրա խորին համոզմամբ գտնվում է աշխարհի բոլոր ծագերում, բոլոր երևույթների,հետևաբար նաև բնության մեջ, ուստի գովերգել բնությունը,նշանա-կում է գովերգել Աստծուն.Նարեկացին ստեղծել է բնության այլաբանական երգեր: Այլ է Մեծարենցի պարագայում.երիտասարդ հանճարը կուսական բնության մեջ է փնտրում Իրական գեղեցկությունը,որը անաղարտ է մնացել, այսինքն՝ չի աղավաղել աստվածային արարչագործությունը:Ահա այսպիսի անաղարտ պատկերներն էին ,որ Մեծարենցին ուժ էին տալիս ապրելու և ստեղծագործելու,իրեն անդադար հալածող հակառակորդներից պաշտպանվելու,այդ հավերժ նորոգ բնությունն էր,որ կյանքից բազում հարվածներ ստա-ցող բանաստեղծին հիշեցնում էր իր գյուղական ծննդավայրը,կյանքի կենսախինդ և եր-ջանիկ օրերը:Բնությունը բանաստեղծության հիմք դարձրած Մեծարենցը ամենահան-ճարեղ ձևով բացատրել է իսկական բանաստեղծի տարբերությունը գրական միջակու-թյուններիս.<<Բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա,թե ոչ բանաստեղծ չէ իրապես.քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայ-լը,մարդերուն գորովը, դաշտին ու լերան մշտանույն զորությունը:Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա, բոլոր գոյություններուն հա-դրական թրթռումովը տրոփուն>> / 10 /:Բանաստեղծության այսպիսի ընկալումը,իսկա-պես, բացառիկ երևույթ է բոլոր ժամանակների գրականագիտական մտքի ձեռքբերում-ների մեջ:

/10/Մեծարենց Մ.,Երկեր,Երևան,1986թ.,էջ 175

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով Նարեկացի-Մեծարենց գրական առնրություններին նվիրված աշխատությունը՝ վստահաբար գալիս ենք այն եզրահանգման, որ բանաստեղծական այս կապը նախևառաջ գենետիկ հիշողության, աստվածատուր հանճարեղության փայլուն ապացույցն է հայ գրականության դարավոր պատմության մեջ:Մեծարենցի համար Նարեկացին գրական ուսուցիչ էր, նրշնչանքի մեծագույն աղբյուր:Ժամանակաիցների հավաստի վկայությունների համաձայն՝ անգամ հիվանդության ամենածանր պահերին Մեծարենցն իր մոտ ունեցել է <<Նարեկը>>, որը եղել է նրա դժվար ժամերի անդավաճան ուղեկիցը. Ահա սրանով կարելի է բացատրել Նարեկացու հետ հոգեկան այդքան մեծ կապվածություն ունենալու պատճառը:Մեծարենցը այս հատկանիշների շնորհիվ է, որ նարեկացիագիտության մեջ մնայուն տեղ է զբաղեցնում, և այս երկու բանաստեղծությունների միջև առկա հոգևոր կապը,գրականության մեջ ընդլայնելով իր սահմանները,բարձրանում է բանաստեղծների միջև առկա գրական ցեղակցության աստիճանի,որն էլ գրականության մեջ իր արտացոլումը գտավ նախ գրաքննադատական արժեքավոր աշխատության՝ <<Նարեկացիին հետ>> հոդվածի միջոցով,իսկ բուն պոեզիայում Մեծարենցի՝Նարեկացու ազդեցությամբ գրված բանաստեղծություններում,որոնց ծնունդը պայմանավորել էին հետևյալ հատկանիշները.

1/առձայնույթի և բաղաձայնույթի զգալի կիրառություն

2/հումանիզմ

3/գեղարվեստական խորհրդանիշ-պատկերներ

4/բանաստեղծության միջոցով Աստծուն դիմելու բացառիկ ընդունակություն

5/բնության պատկերների եզակի նկարագրություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1/Թամրազյան Հր.,Բանաստեղծությունների հազարամյա խորհուրդը,Երևան,1986թ.

2/Մեծարենց Մ.,Երկեր,Երևան,1986թ.

3/Մկրյան Մ.,Երկեր,Երևան, 1986թ.

4/Նալբանդյան Վ.,Գրիգոր Նարեկացի,Երևան, 1990թ.

5/Չոպանյան Ա.,Երկեր,Երևան,1988թ.

6/Պարույր Սևակ,Երկեր,հ.3,Երևան,1983թ.

7/Ձրբաշյան Է.,Միսաք մեծարենց,Երևան,1877թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1/Տիտղեսաթերթ---------- 1

2/Հետազոտական աշխատանքի խնդիրները---------- 2

3/Նարեկացի-Մեծարենց գրական առնչությունները---------- 4

4/Մեծարենցը Նարեկացու մեկնաբան---------- 7

5/Եզրակացություն---------- 15

6/Օգտագործված գրականության ցանկ---------- 16

7/Բովանդակություն---------- 17